

«Յուքոմ» ՍՊԸ
Համախմբված ֆինանսական հաշվետվություններ
2014թ. դեկտեմբերի 31-ին
ավարտված տարվա համար



KPMG Armenia cjsc
8th floor, Erebuni Plaza Business Center,
26/1 Vazgen Sargsyan Street
Yerevan 0010, Armenia

Քեյ-Փի-Էմ-Ֆի Արմենիա ՓԲԸ
ՀՀ, Երևան, 0010
Վ.Սարգսյանի փ. 26/1,
«Էրեբունի Պլազա» Բիզնես-կենտրոն,
8-րդ հարկ

Telephone Հեռախոս + 374 (10) 566 762
Fax Ֆաքս + 374 (10) 566 762
Internet Ինտերնետ www.kpmg.am

Անկախ աուդիտորական եզրակացություն

«Յուրոմ» ՍՊԸ
Ղեկավարությանը

Մենք իրականացրել ենք «Յուրոմ» ՍՊԸ-ի («Ընկերություն») և վերջինիս դուստր կազմակերպությունների («Խումբ») կից ներկայացվող համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտը, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, հաշվետու տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունները, ինչպես նաև ծանոթագրությունները, որոնք ներառում են հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները և այլ բացատրական տեղեկատվություն:

Ղեկավարության պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար

Այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների՝ ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն կազմման և ճշմարիտ ներկայացման համար պատասխանատու է ղեկավարությունը: Ղեկավարությունը պատասխանատու է նաև այնպիսի ներքին վերահսկողության համակարգի համար, որը, ղեկավարության կարծիքով, թույլ կտա կազմել սխալների կամ խարդախության արդյունքում առաջացող էական խեղաթյուրումներից զերծ համախմբված ֆինանսական հաշվետվություններ:

Աուդիտորի պատասխանատվությունը

Մեր պատասխանատվությունն է անցկացված աուդիտի արդյունքում արտահայտել կարծիք համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Մենք աուդիտն անցկացրեցինք Աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան: Այդ ստանդարտներով պահանջվում է, որ մենք հետևենք էթիկայի պահանջներին և աուդիտը պլանավորենք ու իրականացնենք համախմբված ֆինանսական հաշվետվություններն էական խեղաթյուրումներից զերծ լինելու մասին ողջամիտ երաշխիք ձեռք բերելու նպատակով:

Աուդիտորական աշխատանքները ներառում են այնպիսի ընթացակարգերի իրականացում, որոնք թույլ են տալիս ձեռք բերել աուդիտորական ապացույցներ համախմբված ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարների և բացահայտումների վերաբերյալ: Ընտրված ընթացակարգերը կախված են աուդիտորի դատողությունից, ներառյալ համախմբված ֆինանսական հաշվետվությունների՝ խարդախությամբ կամ սխալներով պայմանավորված էական խեղաթյուրումների ռիսկի գնահատումը: Այս ռիսկը գնահատելիս աուդիտորը դիտարկում է համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ կերպով ներկայացման համար կիրառվող ներքին վերահսկողության համակարգը՝ նպատակ ունենալով մշակել համապատասխան աուդիտորական ընթացակարգեր, բայց ոչ կարծիք արտահայտել կազմակերպության ներքին վերահսկողության համակարգի արդյունավետության վերաբերյալ: Աուդիտորական աշխատանքները ներառում են նաև համախմբված ֆինանսական հաշվետվությունների կազմման ժամանակ կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականության համապատասխանության, ղեկավարության կողմից կատարված հաշվապահական գնահատումների խելամուտության, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատումը:

Մենք գտնում ենք, որ ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավականաչափ են և համապատասխան՝ մեր կարծիքի հիմք հանդիսանալու համար:

Եզրակացություն

Մեր կարծիքով համախմբված ֆինանսական հաշվետվությունները, բոլոր էական առումներով, ճշմարիտ են ներկայացնում Խմբի ֆինանսական վիճակը 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև վերջինիս գործունեության արդյունքներն ու դրամական միջոցների հոսքերը հաշվետու տարվա համար՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն:


Տիգրան Գառապարյան
Գործընկեր, «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՓԲԸ-ի Տնօրեն

KPMG Armenia ysc
«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՓԲԸ
25 հունիսի 2015թ.



հազ. դրամ	Ծնթգ.	2014թ.	2013թ.
Ակտիվներ			
Հիմնական միջոցներ	11	19,496,636	15,271,903
Ոչ նյութական ակտիվներ	12	12,016,672	7,061,089
Տրված փոխառություններ		36,468	23,863
Այլ ոչ ընթացիկ ակտիվներ		5,400	5,400
Ոչ ընթացիկ ակտիվներ		31,555,176	22,362,255
Պաշարներ		262,165	183,140
Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր		2,105,710	1,171,828
Ստացվելիք ԱԱՀ		759,830	1,285,157
Կանխավճար շահութահարկի գծով		19,968	16,851
Կանխավճարներ այլ հարկերի գծով		7,604	364,059
Կանխավճարներ		325,192	345,706
Տրված փոխառություններ		56,260	43,552
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	13	214,741	62,298
Ընթացիկ ակտիվներ		3,751,470	3,472,591
Ընդամենը ակտիվներ		35,306,646	25,834,846
Սեփական կապիտալ			
Կանոնադրական կապիտալ	14	15,050	15,050
Կուտակված վնաս		(1,906,109)	(24,569)
Լրացուցիչ կապիտալ		6,519,894	6,519,894
Ընդամենը սեփական կապիտալ		4,628,835	6,510,375
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ	15	18,915,673	13,820,246
Հետաձգված հարկային պարտավորություններ	10	1,263,934	1,280,587
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	16	659,266	-
Ոչ ընթացիկ պարտավորություններ		20,838,873	15,100,833
Ընթացիկ պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ	15	4,539,391	1,443,817
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	16	4,983,989	2,275,412
Ստացված կանխավճարներ		162,562	131,991
Վճարվելիք այլ հարկեր		128,903	75,135
Ընթացիկ հարկային պարտավորություն		24,093	297,283
Ընթացիկ պարտավորություններ		9,838,938	4,223,638
Ընդամենը պարտավորություններ		30,677,811	19,324,471
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		35,306,646	25,834,846

«Յուքոմ» ՍՊԸ

*Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվություն
2014թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար*


հազ. դրամ	Ծնթգ.	2014թ.	2013թ.
Հասույթ	5	11,946,852	8,836,297
Այլ եկամուտ		59,943	64,391
Ձեռքբերված իմուրներ և հեռուստալիքներ		(1,933,008)	(2,372,299)
Մաշվածության և ամորտիզացիայի ծախսեր		(2,743,118)	(1,839,031)
Աշխատակազմի գծով ծախսեր		(1,724,000)	(1,222,743)
Գործառնական վարձակալության գծով ծախսեր	6	(585,330)	(417,416)
Շուկայավարման ծախսեր		(497,480)	(220,498)
Վաճառված ապրանքների ինքնարժեք		(82,516)	(113,807)
Իրականացված աշխատանքների ինքնարժեք		(114,567)	(100,944)
Օգուտ գեղչով ձեռքբերումից		-	196,012
Ոչ նյութական ակտիվների արժեզրկումից կորուստ		-	(92,346)
Այլ ծախսեր	8	(1,385,216)	(723,570)
Գործառնական գործունեության արդյունքներ		2,941,560	1,994,046
Ֆինանսական եկամուտ	9	377	335
Ֆինանսական ծախսեր	9	(4,510,981)	(893,206)
Զուտ ֆինանսական ծախսեր		(4,510,604)	(892,871)
(Վնաս)/շահույթ նախքան շահութահարկով հարկումը		(1,569,044)	1,101,175
Շահութահարկի գծով ծախս	10	(312,496)	(217,001)
(Վնաս)/շահույթ և ընդամենը համապարփակ (վնաս)/եկամուտ տարվա համար		(1,881,540)	884,174

Այս համախմբված ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են ղեկավարության կողմից 2015թ. հունիսի 25-ին և ստորագրվել են վերջինիս անունից:

Հայկ Եսայան
Տնօրեն



Արման Դրոյան
Ֆինանսական տնօրեն



Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունը պետք է դիտարկվի 9-ից 45-րդ էջերում ներկայացված համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

հազ. դրամ	Ընկերության մասնակիցներին վերագրելի			
	Կանոնադրական կապիտալ	Լրացուցիչ կապիտալ	Կուտակված վնաս	Ընդամենը սեփական կապիտալ
Մնացորդը առ 1 հունվարի 2013թ.	15,050	4,856,067	(908,743)	3,962,374
Սկզբնական զեղչ մասնակցից ցածր տոկոսադրույքով ստացված վարկերի և փոխառությունների գծով՝ առանց 415,958 հազար դրամ հետաձգված հարկի (ծնթգ. 10)	-	1,663,827	-	1,663,827
Շահույթ և ընդամենը համապարփակ եկամուտ տարվա համար	-	-	884,174	884,174
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2013թ.	15,050	6,519,894	(24,569)	6,510,375
Մնացորդը առ 1 հունվարի 2014թ.	15,050	6,519,894	(24,569)	6,510,375
Վնաս և ընդամենը համապարփակ վնաս տարվա համար	-	-	(1,881,540)	(1,881,540)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2014թ.	15,050	6,519,894	(1,906,109)	4,628,835

հազ. դրամ	2014թ.	2013թ.
Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից		
Հաճախորդներից ստացված դրամական միջոցներ, ներառյալ ԱԱՀ	13,131,838	10,326,663
Մատակարարներին վճարված դրամական միջոցներ	(4,136,634)	(4,761,677)
Աշխատակիցներին վճարված դրամական միջոցներ	(1,060,882)	(962,665)
Վճարումներ շահութահարկի գծով	(605,466)	(195,547)
Վճարված հարկեր՝ բացառությամբ շահութահարկի	(1,462,600)	(1,381,456)
Վճարված տոկոսներ	(367,318)	(191,002)
Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ	5,498,938	2,834,316
Դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից		
Տրված փոխառություններ	(79,125)	(107,801)
Տրված փոխառությունների մարում	47,227	150,818
Ստացված տոկոսներ	377	211
Հիմնական միջոցների ձեռքբերում	(4,821,769)	(4,673,298)
Ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(232,632)	(5,848,625)
Ներդրումային գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	(5,085,922)	(10,478,695)
Դրամական միջոցների հոսքեր ֆինանսավորման գործունեությունից		
Հոսքեր վարկերից և փոխառություններից	3,634,367	10,375,081
Վարկերի և փոխառությունների մարում	(3,915,658)	(2,787,612)
Ֆինանսավորման գործունեության համար (օգտագործված)/ֆինանսավորման գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ	(281,291)	7,587,469
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ/(նվազում)	131,725	(56,910)
Դրամական միջոցները և դրանց համարժեքները հունվարի 1-ի դրությամբ	62,298	103,317
Փոխանակման փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	20,718	15,891
Դրամական միջոցները և դրանց համարժեքները դեկտեմբերի 31-ի դրությամբ (ծնթ. 13)	214,741	62,298

* 2014թ. ընթացքում խումբը ձեռք է բերել հիմնական միջոցներ, ոչ նյութական ակտիվներ և պաշարներ համապատասխանաբար 2,498,931 հազար դրամ, 1,461,817 հազար դրամ և 444,393 հազար դրամ արժեքով, որոնք ֆինանսավորվել են բանկերից ներգրավված ակրեդիտիվների միջոցով: Տարողության օգտագործման անխախտելի իրավունքին վերաբերող ոչ նյութական ակտիվի (ծանոթագրություն 12) ձեռքբերման գծով վճարման ժամկետները հետաձգվել են:

Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունը պետք է դիտարկվի 9-ից 45-րդ էջերում ներկայացված համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ: